

# ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Abréger les travaux c'est prolonger  
la vie. — Duployé.

Մարդս՝ հաւատարիմ իւր 'ի բնէ ստա-  
յած սկզբանց՝ դարուց 'ի դարս կը ճգնի  
թեթեւցրեւելու աշխատութեան լծոյն ծան-  
րութիւնը, զիրացընելով անոր միջոցնե-  
րը. և այս սկզբնական բերմամբ՝ ինչպէս  
այժմ կենդանեաց կամ մարդկանց ուժոյն  
տեղ չոգուց բռնութիւնը փոխանակած է,  
և ուր հնար է չոգուց տեղ մագնիսական և  
էլեկտրական զօրութեամբ կը գործէ, այս-  
պէս նաև 'ի սկզբանէ հետէ հնարադիտու-  
թեամբ մեքենայից՝ ջանացեր է միշտ թե-  
թեւցրել իւր անձնական կատարելիք աշ-  
խատութիւնն: Հոս մեք 'ի նկատի կ'ուղեմք  
առնուլ միայն Վեր 'ի վերայ տեսութեամբ՝  
մարդոցս այս ընդաբոյս բերման յառաջա-  
դիմութիւնն 'ի գրութեան մասին: Յիրուսի,  
դարուսր կենաց հիասքանչ յիշատակներ  
են այն եզրիպատկան և ասորս — բարեխա-  
կան արձանագրութիւնք, զորս ժամանա-  
կին յանդուգն երևակայութիւնն և ձեռ-  
քերն ուղեր են բուրգներու և անխորտո-  
կելի ժայռերու վրայ դրուել, իբրև անմա-  
շխի մանրձական յիշատակ նախնեաց քա-  
ղաքործութեանց առ յետագայ սերունդս  
մարդկութեան: Բայց որչափ անձինք ար-  
կեօք պիտի կարողանային սոյնպիսի աշա-  
ւոր ձեռնարկի մը դժուարութեան յուշ-  
թելով՝ գերեզմանէն անդին ևս սպազայից  
հետ խօսել, հաղորդակցել և անոնց մասց  
հետ սարկել անշուշտ կամ մեծագործ Փա-  
րաւոն մը, կամ Ասորեստանի միահեծան  
յաղթանակող աշխարհակալ մը, կամ Խա-  
րայեղեան բանակին առաջնորդը մշտա-  
յաղթ զօրավար մը, և կամ առասպելաւան  
զին Եսմիրտմայ նման՝ ժամանակին զից-  
ագնուհի մը. իսկ այլ ամենայն բերագոյն  
խմաստնոց մտացն և հոնճարոյ ստեղծա-  
գործութիւնք, որք փոխանակ սնտափ պար-  
ժանաց և արիւննուշտ յաղթանակաց՝ պի-  
տու ականջին մեզ՝ մեր նախնեաց ընտա-  
նեկան կինաց քաղցրութիւններն և դառ-  
նութիւններն և անոնց մտաւորական զար-  
գացման արգասիքները՝ իսպառ լուսութեան

մէջ պիտի թաղուէին: Բայց ոչ. մարդս  
նման առուակի մը՝ որ լերան մը բարձր գա-  
զաթէն վար իջնելով՝ տեղի կու տայ ար-  
գելիչ ծայռերու, և իւր ընթացքը փոխե-  
լով՝ զիրացընելու ճանապարհէ մի վար կը  
սահի, մարդս՝ դժուարութեան դէմ պա-  
տերազմելէն աւելի՝ ընդհանրապէս կ'ընտ-  
րէ խոյս տալ անտի՛ երբ կարող է. փոխա-  
նակ ծայռեր և կարծր վէմեր ընտրելու իւր  
զաղափարաց աւանդապահ, 'ի գործ կ'ածէ  
առ ոյն՝ թրծուն աղիւսներ և ծառոց կե-  
ղևներ, թէպէտ և շլինին սոքա այնքան եր-  
կարակեաց՝ որչափ առաջինքն. սրով դա-  
րուց յառաջադիմութեան հետ գրութեան  
եղանակն ևս զիրանալով՝ մեղհնայորոյ՝  
քանդակաց և սեպածև բեւեռագրաց սեղ՝  
կը փոխանակեն աղիւսաց կամ մետաղա-  
կան տախտակաց և պատկերաց գրուած-  
ներն. և յայտ է որ մարդկութիւնն անգամ  
մի այս նիւթոյ փոփոխման առաջին քայլն  
առնելով՝ պիտի ջանար հետզհետէ զիրու-  
ցընել գրութեան ենթակայն, մերթ ընտ-  
րելով զսեկերս, մերթ գմագաղաթս, մերթ  
բամբակիս գործուած թուղթն, մերթ մե-  
տաքսիս կամ բրնձեայ շինուած ենթա-  
կաներ, մինչև մեր օրերուս սովորական  
թղթոց զիրութեանն և ազտութեանն  
հասնելով. և այս՝ ըստ կազմածոց ենթա-  
կայի գրութեան:

Կոյրք պիտի նշմարենք նաև ըստ ոճոյ  
կամ ձևի գրութեան՝ եթէ ականարկ մի  
ձգենք եզրիպատկան խորհրդական նշա-  
նաց՝ առ տակաւ տակաւ այլափոխու-  
թեանն 'ի սեպածև գրութիւնս, 'ի փոխի-  
կեան, յերայայտան և 'ի համօրէն սեմա-  
կան լեզուայ նշանադիրս, որք զեւ ևս ի-  
րենց անկիրնաւոր ձևերով՝ յիջեցրել կու  
տան նախկին բեւեռագրաց ծնունդ լիճել-  
նին:

Արի՛չ նշանաւոր երևոյթ մ'ալ 'ի գրու-  
թեան մասին սեմական լեզուաց՝ կը ներ-  
կայանայ մեր առջև, այսինքն ձայնաւոր  
նշանաց տարագրութիւնն. յորմէ և բառի

մը զանազան կերպ ճշտումն՝ անխոփոս մնալով միայն բազմաձայններն։ Այս կրեւոյթն եւ՝ սրբան և տրամաբանական հետեւանք մ՛է լեզուաբնութեան մէջ, սակայն ոչ սակաւ պժուարութիւն կ'ընծայէ գրաստը լեզուի մը տարածելուն և ընդհանրանալուն։ Ազգային լեզուներն թէպէտ և ՚ի բնէ զուրկ է սեմական լեզուաց այս յատկութենէն, և իւր քայրաթիւ հնչերութեան լեզուաց համաձայն՝ պահած է հնուց ՚ի վեր իւր ձայնաւորաց գոյութիւնն։ Ի գրութեան, սակայն ինչպէս կ'երևի, Հազարացուց լեզուին մեր աշխարհին մէջ մուտ գտնելէն պիտի՝ ունեցիք է նաև լեզուներն իւր բազմաձայնակն կամ պատուապիր գրութիւնն՝ նկատմամբ այր տառին, և ուրիշ սրբեր նաև ուրիշ քանի մի ձայնաւորաց։

Այս նշանաւոր երևութէն զամբ եթէ նաև վեր ՚ի վերոյ պնակի մի տալ ուզենք մեր լեզուին գրութեան ՚ի ձեռագիրն, պիտի տեսնենք՝ որ մեր հին տառերն ևս իրենց նախնական ձևոյն մէջ շատ հեռի պիտի չլինէին ՚ի բեւեռած գրութեան, որք յետոյ զարուց ՚ի զարս փոփոխուելով՝ երկաթագիր, բոյրագիր, նոտրագիր և շեղագիր գրութեանց ձև երով կը ծառայեն մեզ ցայսօր ժամանակի։ և կրնանք իսկ առանց երկարելու յաւելուիլ որ թիրս մեր երկաթագիրն այնքան հեռի չլինի ՚ի բեւեռածին՝ որքան այժման շեղագիրն ՚ի նախնին երկաթագրոյն։

Ինչն ցատտ բամբէս կ'ուզենք հետեւընել՝ որ զարուց ՚ի զարս մարդկութիւնն բնազատեալ ՚ի յառաջագոյն՝ զիւրութենէ փոփոխակի Հազարակցութեան բնակչաց հետաւոր աշխարհաց, պէտք զգալիք է միշտ իւր զազափարաց բացատրութեան պիւրագոյն և արողագոյն ևս եղանակ մի հետարեւու քան զնախընթաց ժամանակին զնորածուածն. որով և նախնին գրութեանց ցանկազգիծ և բազազրեալ ձևերն՝ վերածուած են սանձապարզ և զիւրազգի ձևերու։ Արդարև ո՞ր Յոյնն և Հրեանովմայեցին, Գերմանացին և Հայն իւր հրեւնագիր ձևաւորաց իւրաքանչիւր պարտաւոր տեսելով սպասը՝ պիտի չզգայ խորշումն աննց անկանոն և խոշորալիծ ձևերէն, և որոց ընթերցումն իրեն Համար յատուկ ուսման մը ստի՞ք պիտի լինի։ Այս, առաւել կամ նուազ քաղաքակրթեալ ազգի մը գրութեան տառերն՝ ստաւել կամ նուազ սասիճան գեղեցիկութեան կ'ընծայեն մարդկային ճաշակի, և թերևս գրութեան ոճոյ վայելչութիւնն՝ զոչք ընդ զիւրասահութեան՝ կարենայ մասամբ մի յայտարար նշան Համարուիլ ազ-

գի մը ուսումնական զարգացման աստիճանին. վասն զի գործի մը որչափ աւելի գործածուի, այնքան ևս՝ առաւել յղկեալ, փայլուն, կատարելագործեալ և ՚ի զարգացման կը պահուի։

Բայց միթէ մըս անընդատ յառաջագիւմութիւնն ՚ի մասին գրութեան մեր օրերս հասած է իւր բարձրագոյն աստիճանի կատարելութեան, միթէ ստացած է լիուրթ այն արագութիւնն՝ զոր կը պահանջեն ժամանակակա պարագայք, միթէ մինչ ՚ի զնեիք վերացեր և գողաբր տառ է առաւել ևս բարձրանալէ և կատարելագործուիլէ։ — յայտ է թէ ոչ որ առանց տրամաբանական և փորձառական զիտութեան գէժ անհրաւելու՝ կարող է հաստատական պատասխան տալ։ Եթէ կարելի լինի մարդուս իւր գրութեան եղանակը հասասարել այն արագութեան՝ որով միտքն ՚ի վայրկեան կը յշտանայ բիրտաբար գազափարները, այն ստանն միայն լիուրթ գոչ լինելով պիտի գազարբ մարդս ՚ի փոփոխանաց յառաջագիւմութեան. բայց քանի որ այս գազափարական նպատակէն դեռ շատ հեռի կը նըկատէ իւր արտեւորը, պիտի ձգտի միշտ առ այն, պիտի անձկայ միշտ և հետամուտ լինի չնարեւու եղանակ մի՝ որով եթէ կարող չլինի գրուիլ և ՚ի թղթի մտաց փախուստական արագացուց գազափարները, սակայն կարենայ գէթ զայն բացատրող բնածիր գործարանին, այսինքն լեզուի կամ խօսելու ձրեց արագութեանն հասնել։

Եւ յիւրաքին, միթէ մեզմէ իւրաքանչիւրին հանդիպած չէ՞ շատ և շատ անգամ, որ մինչչևս գրիչն ինքնակն կը ջանայ գրուիլ ՚ի թղթի մտաց գազափար մը, ուրիշ մը միայն հասնելով միտքն նոր եկաւորին հետ պարզած, անկատար թողու առաջնոյն բացատրութիւնը. որոց բազմաթիւք ևս հետէ է ետև իրբե չղթայի մը օղակներ յաջորդելով, կամ այն է՝ որ կը յուսահատացընեն զգրոյն անխոփելու և կազակցելու գոյնն իրարու հետ, և կամ որ շատ աւելի ստեպ կը հանդիպէ՝ միայն հետ գրաղելով միսնն կը անհետանան և կամ իրենց բուկարենական փայլը կը կորսընցընեն ՚ի բացատրութեան։ — Դարձեալ, միթէ մեզմէ իւրաքանչիւրին հանդիպած չէ՞ շատ և շատ անգամ, որ եկեղեցեաց մէջ քաջախօս բարոզի մը, սանեից մէջ կրակոտ փաստասանի մը, ժողովուրդ մէջ ետառու ճարտասանի մը, բնամտքական կաճառաց մէջ իմաստուն բնախոսի մը հանճարէն բարբոջուած և մեր մտաց այխուսով աւելի ևս վառուած՝ փոփոքիք այն իմաստներն անհրաման հետեւորինս կրել, և սակայն ձեռ-

քերինս անկարող տեսնելք այնպիսի արւագութեան մը հասնելով՝ փափաքտոմնիս ըրաքցնելու։ — Գարձնալ, միթէ մտզէ իւրաքանչիւրին հանդիպած չէ՛ շատ և շատ անգամ, որ գիրք մի կարգացած ժամանակինս՝ փափաքած լինինք առանց երկար ժամանակ կորսընդնելու՝ գաղտնարիչ անկից գտնողան գնդեցիկ և կարև որ հատուածներ 'ի թղթի, և սակայն ժամանակին սղութեանէն յաճար անկատար կը թողունք կամքերնիս։ — Ո՛ր դպրոցականն չի բողձար ամէն վայրկեան՝ փոխանակ զանազան գրոց անվերջանալի էջերուն մէջ ընդերկար և գուցէ նաև անօգուտ անը թարթափելու, քով վարձակտի մը խօսած գտներն ամփոփելու գիրութեամբ, որք ամբարանոց մ'են բազմաթիւ գրոց աւանդածին, և շատ անգամ՝ նաև սեփական յատուկ գիտութեան և փորձոյ արդիւնք։ Բայց շատ երկայն պիտի լինէր խօսքերնիս եթէ կամէինք մէջ բերել աստ մի առ մի այն ամենայն օգուտներն ու ծառայութիւնները՝ զորս սղագրութիւնն միայն կարող է կատարել՝ մարդկային անտեսական, քաղաքական և մտաորական կենաց բազմազգի կարօտութիւնները լեցընելով 'ի գրութեան մասին. կարօտութիւնք՝ որք կը մղեն զմարդ անխոնջ ընթացիւք յառաջադիմելու իւր կոչմանը մէջ, որ է զարգացումն գիտութեանց և արուեստից։

Այ՛, այս ամէն կարօտութեանց՝ սղագրութեան արուեստն օր ըստ օրէ կատարելագործուելով՝ շննացեր և յաջողքի է պարման մատուցանելու Բայց ինչ է արդեօք այս արուեստն, ինչ նպատակ ունի, երբ ծագումն առած է և մարդկային պատմութեան մէջ ինչպիսի մասն ունեցեր է մինչև մեր օրերը. ահաւասիկ չորս հարցեր, որոց համառօտիւ պատասխան տալով՝ կը փափարինք գոհացընել զընթերցող, որով միանգամայն անուղղակի կերպով՝ մեր աշխատանաց կարևորութիւնը ցուցանելու։

Սղագրութեան արուեստն ուրիշ բան չէ՛ բայց և եթէ կանոնաւոր գրութիւն մի՛ բոտ կարելոյն համառօտ ժամանակի մէջ և փոքրագոյն ենթակայի փայ գրելու։ Այս առած սահմանէս կ'իմացուի յայտնի սղագրութեան նպատակն, որ է նիւթական և մտաւորական օգտութիւն մարդու։ Դամանակն է գրամագլուխ, կը-

սննք սովորաբար, և սակայն ճրջափ քիչ են այս պատրաստական գրամագլուխ շահնընդներն. գրագիրտ մը համար՝ սղագրութիւնն կը պարզէէ իրեն իւր կենաց եռապատիկ ժամանակը, թող այն ուղղակի գրամական շահերն՝ զորս կրնայ սղագիրն ձեռք բերել քաղաքական և գիտական տանիքց մէջ։ Բայց այս վերջին շահն ոչ է ուղղակի նպատակ սղագրութեան, ինչպէս բազմազոյք թերևս սխալմամբ մտքերին գրած լինին. այլ սղագրութեան ազնուագոյն և միակ պաշտօնն է օգնել զարգացման գիտութեանց՝ դիրացընելով գրութեանց և հազորակցութեանց միջոցները, և եթէ հնար է՝ օր մը զանազան սղագոյ սովորական այրտաբնից տեղ փոխանակելի, իրրէ հանրագոյնին կանոնաւոր գրութիւն մի։

Սղագրութեան արուեստին ծագումն, ինչպէս յառաջ նկատել ուզեցինք, ուսումնասէր մարդկութեան հետ սկսած է, անոր հետ յառաջադիմած, և իւր զարգացումն ստացել է իմաստնոց ձևաբով, որով յայտնի կ'երևի՝ որ ոչ թէ գրամական շահն ճիշդն եղած է ստեղծուելուն պատճառ, այլ ժամանակին մտաւորական կարօտութեանց պահանջն և ջանքն։ Սղագրութիւնն յատուկ արուեստական կերպարանք զգացած է Հռովմայեցոց մէջ՝ կիկերոնի ժամանակ և յատկապէս վերջնոր Տիրոն առնուն սղատագրին ձեռամբ, որով երբևիճ կոչուած է նաև Տիրոնեան արուեստ. բայց Տիրոնի հնարած սղագրութիւնն բոտ կամ սահմանուած նշաններով՝ կը կազմուէր, որոց քոնի մը հազարաւոր թիւն՝ անհնարին կը լինէր մարդու սխշողութեան մէջ ամփոփուելու։ Սոյն արուեստն Յունաց մէջ աւելի կատարելագործուեցաւ քրիստոնէութեան սկիզբները, մանաւանդ երկրորդէն մինչև ցհինգերորդ դարուց մէջ, յորում՝ ժամանակի՛ ինչպէս յայտնի է 'ի պատմութեանց՝ Որոզինեսի, Ոսկերիքսի։ Այգուտնիտի և ուրիշ Ս. Հարց ճառարտութիւններն 'ի սղագրաց կ'ամփոփուէին 'ի թղթի և ժողովրդեան մէջ կը տարածուէին. բայց նաև այս ամենայն ամփոփումներք՝ ազատ կամօք սահմանուած նշաննէս էին և կամ բառից կրճատութիւնք, ինչպէս կը գտնուին նաև մեր ձեռագրաց մէջ, որք և փակագիր կը կոչուին. օրինակ իմն հետեւեալ սովորական եղածներն.

և, (և. ալն), եր (գոր օրինակ), ջ (այսինքն), ը (բոտ), շ (ընդ), Յ (աշխարհ), չ (որպէս), և, (

Սղագրութեան զարգացման արգելք եղան մեծապէս բարբարոս սղագաց անընդ-

հատ և սպականիչ արշաւանքներն յերոպա և 'ի քաղաքակրթեան Արևմտեան Ա-

որա, եղծանելով զգիտութիւնս և զգորութիւնս, և բռնութեանց ու հարստահարութեանց կեղերիչ լծոյն աակ նուաճելով ամենէն աւելի ազատասէր ոգիները: Գիտութեանց անկումն՝ իրեն հետ գաւալիման ևս կրուցութեան արուեստը, մինչև ցգիւս տալագրութեան: Զարմանալի կերպով մ'է գրականական պատմութեան մէջ, որ մինչդեռ տալագրութիւնն գրութեան ասպարէզը ամբողջելով կարծես արգելք պիտի լինէր սղագրութեան վարպետման, սակայն ընդհակառակն պատճառ հողաւանոր վերանորոգման: Անգղիա սկզբնական շարժիչ զանուեցաւ այս զարգացման և զոգցելս խոնձարուք եղաւ սոյն արուեստին: Թէլլորի և Իսակահի Քիւմանի ձեռքով հիմն դրուեցաւ այն երկրաչափական սղագրութեան, որով յետոյ ինչ ժամանակի մէջ պիտի տարածուէր ընդ հարաւորէն Միտոպ, պիտի վերածուէր բազմութիւ լեզուաց, և սոյն արուեստը կանոնաւոր դրութեան մի պիտի հպատակեցնէր: Քայց Թէլլորի դրութեան որչափ ալ կանոնաւոր էր, սակայն շատ հեռի էր այն արագութեան աստիճանէն՝ զոր էր պահանջելին ժամանակին պարագաներն. ուստի հարկ եղաւ դարձեալ նոյն դրութեան մէջ մուծանել անթիւ ըստ կամս համառոտութիւնն: որք արգելք եղան անոր վարպետուն, առանց կարենալու համար այն կատարելութեան՝ զոր կրցուէ ստանալ գերմանացի Քասեիը Կատիւպէրիկերի դրութիւնն: Արքիմոյս առաւելութիւնն քան զնախնիքաց անգղիական դրութեան կը կայանայ դանազան կէտերու մէջ, յորոց զլիաւորներն են հետեւեալներն.

Կապիւպէրիկերի դրութիւնն իւր սղամուտները կը կատարէ՝ համեմայն իւրաքանչիւր ազգաց լեզուին քերականական, բառաբացմական և ներքին յորինման մինչդեռ Թէլլորի դրութիւնն ըստ կամս և շատ անգամ նաև անիմանալի սլամուտներ կը գործածէ:

Կապիւպէրիկերի դրութեան ուսումնն որչափ որ գծուարին է քան զանգղիականն՝ ի սղգրան նորավարժի մը համար, սակայն արքիմոյս սղ համեմատական է. վասն զի կանոնաւոր սղմանց պատճառաւ՝ նոյն դրութեամբ գրուած մը ամէն տունն և ամէն սլագիրներէ՝ որ նոյն դրութիւնը գործածին կրնայ առանց ընաւ գծուարութեան մը կրնայացուիլ սովորական տալագրներման: մինչդեռ անգղիական դրութեամբ գրուածի մը ըստ կամս եղած համառոտագրութիւններն՝ ինչ մը ժամանակ վրայ անցնելով շատ անգամ՝ նաև գրողին զծուա-

րութիւն կը պատճառեն կարգալու, թող թէ ուրիշ անձի մը:

Անգղիական նշանագրաց դրոյմուելու կերպին մէջ մերթ յալ և մերթ ՚ի ձախ կատարուելիք գրչին անրնական և սովորական գրութեան անհամաձայն շարժումներն՝ բոլորովին անհետացեալ են Կապիւպէրիկերի դրութեան մէջ, որ ըստ սովորական գրութեան՝ ամբողջեալ է շրտ սահմանագծերու մէջ և միշտ ձախէն զէպ յարկողմին տաւլ կ'ընթանայ, ձեռաց բռնալու շարժման համեմատ:

Այս զլիաւոր առաւելութիւնն, թող ուրիշ ոչ նուազ կարևոր կատարելութիւններ, ինչպէս առաին վայելչութիւն, նշանագրաց դրութեան մէջ և պարզութիւն, ձայնաւոր տառից խորհրդական գրութիւն, և այլն, պատճառ եղան Կապիւպէրիկերի գիւտին որագ արագ ձաւարման ամեն քաղաքականացեալ ազգաց մէջ, ինչպէս ՚ի Վաղղիա, յԱնգղիա, յԻտալիա, ՚ի Սլաւերիա, ՚ի Ռուսիա, ՚ի Ալբերկին Ամերիկայս, ՚ի Յունաստան, և այլն:

Վերոյշեալ այս ամէն տեղերից մէջ կազմուեցան բազմաթիւ ընկերութիւններ՝ իւրաքանչիւրն իրենց կեցրոնական վարչութիւն մը հաստատելով, և իբրև համագային կեցրոն ճանաչելով Տրիզուպի մէջ գերմանական կոյտերական կաճանս: Անհամար զրբեր և բազմաթիւ օրագիրներ կը հրատարակուին արգ յԵրոպա և յԱմերիկա սոյն դրութեան նշանագրերով, և սղագրութեան ուսումն անհրաժեշտ հարկ մի դարձած է հիմա ՚ի զանազան տերութիւնս բարձրագոյն վարժարանաց մէջ, և ՚ի համալսարանս՝ առանձինն ուսուցչական գահու արժանացած՝ իբրև պարտաւոր ուսուցիչ: Այլ միայն գիտութեանց իւր օգուտները կը մատակարարէ, այլ նաև ՚ի գինուորութեան՝ բանակաց և պատերազմիկ նաւուց մէջ զօրաց իբրև անհրաժեշտ ուսումն ստէժմանած է, որով կ'ընդունին իրենց հրամաններն և, կը կատարելին վախալարձ հաղորդակցութիւնք ՚ի հեռուստ: Տէրութեանց ձեռակուտի և երեսպիտանական ատենից մէջ սահմանուեցան գործինն՝ սղագրիչու համար, յորոց միայն ստորագրութիւնն և պատկերը ներկայացուցած ենք Վաղմովիպիս նախնիքաց հատորներուն մէջ (Հատոր Խ, էջ 232). Համառոտ ըսելք, այժմ սղագրութիւնն Միտոպի մէջ իրեն բազմաթիւ քաղաքիչներն ունի, որոց նպատակն է իսպառ ընդհանրացընել զայն ամենայն ազգաց մէջ և սովորական գրութեան պաշտօնը յանձնել սղագրութեան ձեռքը, և ինչպէս արարա-

կան նշաններն 'ի թուարանութեան' այսպէս նաև համազգային գրութիւն մի հաստատել սղագրութեամբ փոխանակ բարձրագոյն այրուբնից իւրարանչիւր աղգաց, Իտալոյ մէջ սղագրութեան այս եւանդուն կուսակիցներէն մին, ազնուական և գիտուն երիտասարդ Վր, նուական զինուորութեան սպայ և սապետական շրանշտնով պատուեալ սղագրութեան վարժուպետ, Պ. Ոսկար Կրէքայ, որ հիմնադիր և գրութիւն է նէտալոյն սղագրական Պարենոպեան - կաճատիկ, իւրախոյս տուաւ մեզ, շնորհելով իւր ձեռնտուութիւնն՝ վերածելու այս կապելուպէրիբի գրութիւնը ձև և հայկական լեզուի, յորդորելով նուազագոյն յառաջագէմ՝ չգտուելու նաև յայսմ՝ մասին զարգացման՝ աղգի մը՝

որոյ գործունէութիւնն և 'ի լուսաւորութիւն դիմելու ջանքն և յարմարութիւնն 'ի մտաւորական ձիրս' գինքը քաղաքակրթեալ աղգաց սիրելի և բարգելի ընծայեր է: Մեք իրեն և մեր փափաքանոց համաձայն գործելով՝ կը հրատարակեմք նախ 'ի Հոնդիսիս մասն առ մասն մեր վերածմունքն Հայկական-Սղագրութեան, պարտք համարելով աստ հրատարակաւ մեր շընորհակալութիւնը մատուցանել առ Հեղինակն իտալական-նուային-սղագրութեան և իմացաբապետ Սղագրութիւն (Lid Stenografia) տնուամբ լուսամիտ ամսաթիւրթիւն, մաղթելով փափաքանոց՝ որ իւր սիրով մշտեալ այս արուեստն՝ փութով և սիւրջ զարգացումն գտնէ նաև մեր աղգին և ուրիշ առեւելեան ժողովրդոց մէջ:

Հ. Ա. Թ.

## ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԴՐՈՒԹԵԱՆՍ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

**Սղագրութիւնն է տրուեստ մի, որ կ'ուսուցանէ՝ ըստ կարելոյն համառօտ ժամանակի մէջ և 'ի փոքրագոյն ենթակայի գրել:**

Փրանկիսկոս Քասեր կապելուպէրիբի գիւտէն վերջը՝ սղագրութիւնն՝ բանաւոր գրութեան յատկութիւն ստացաւ, ոչ միայն բառից կազմակերպութեան նկատմամբ, այլ և անոնց համառօտագրութեան օրինոք: Այս օրէնքներն որ են ըստ կամս սահմանուած, ինչպէս էին երբեմն Տիրոնեան 2 արագագրութեան մէջ կամ յունական նշանագրութեան և կամ Թէլլերի երկրաչափական համառօտագրութեան մէջ, այլ վերածեալ են կանոնաւոր կատարեալ գրութեան մի:

Այս կապելուպէրիբեան գրութիւնս երկու գլխաւոր մասանց կը բաժնուի, որք են

- Ա. Տեսուած Սղագրութիւն
- Բ. Գործուած Սղագրութիւն

Տեսական կը պարունակէ այն սկզբունքներն և կանոնները, որովք բառերն կը գրուին: Գործնական կ'ուսուցանէ այն կերպերը, որովք պատշաճ են 'ի զօրծ գրուիլ տեսական

մասին սահմաններն. կամ տարբեր բացատրութեամբ ընելով, կը ջուզնէ թէ սղագրութիւնն ինչ նպատակաց կրնայ ծառայել:

- Տեսական կը պարունակէ իւր մէջ.
  1. Կազմութիւն բառից, 2. Համառօտութիւն բառից, 3. Ձեղդումն բառից: Գործնական կ'ամփոփէ իւր մէջ.
    1. Սղագրութիւն յարաբերական, 2. Սղագրութիւն ատենալան:

Տեսականին առաջին մասն կ'ուսուցանէ զբոլորով բառերը ձայնագրապէս, այսինքն՝ ինչպէս որ կը հչուրին. և այս մասին ուսումն բաւական է՝ գաղափարաց պարզ հաղորդակցութեան համար. յայց արագագրութեան բարձրագոյն աստիճանին հասնելու համար՝ անհրաժեշտ կարևոր է նաև երկրորդ մասին ուսումն:

Այս երկրորդ մասին մէջ կ'աւանդուին բառերը համառօտելու կանոններն. և համառօտելու աստիճանին և կերպին համեմատ համառօտութիւնը երեք մասանց կը վերաժուին, որք են.

- 1. Համառօտութիւնը այրուբնական տառից:
- 2. Համառօտութիւնը մասնիկներու .

1 Իրենալ 'ի Միւնիխ Պատիւոյ, 'ի 1789 փետրուար 8, մեռեալ անդ 'ի 1849 յունուար 4:  
 2 Տիրոն կիկերոնի աշտարգեալն էր և գրագիր, որ

հրաբոյ իւր անուամբ կուրած Տիրոնի նշանները, որք մեծա մասամբ ըստ կամս որոշեալ ձևեր էին, առանց յատուկ կանոններու: